ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 1
04.05.2018թ. ԿՆՔՎԱԾ N ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/5Շ/2 ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «14» մայիսի 2018թ.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ս. Ամիրխանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բաղրամյանշին» ԲԲԸ-ն, ի դեմս տնօրեն Գ.Վարդանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, ՀՀ կառավարության ապրիլի 26-ի թիվ 509-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Կողմերի միջև 04.05.2018թ. ԿՆՔՎԱԾ N ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/5Շ/2 պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը համաձայնվեցին.

1.1 Հաստատել Համաձայնագրի 2018թ. վճարման ժամանակացույցը համաձայն հավելվածի (կցվում է):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության	«Բաղրամյանշին» ԲԲԸ
ՀՀ ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,	ՀՀ Արմավիրի մարզ, գ.Լեռնագոգ
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 02565518	ՀՎՀՀ 04600132
ՀՀ 900011020246	ՀՀ 115004673956
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հաստատված է
N ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/9Շ/3 գնման պայմանագրի
«14» մայիս 2018թ. կնքված
թիվ 1 Համաձայնագրով

ՀԱՎԵԼՎԱԾ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
3	45221117	*«Արաքսավան» սահմանապահ ուղեկալ փանող կամուրջի հիմնանորոգման աշխատանքների կատարման*	-	-	-	-	51 999 960	51 999 960	51 999 960	51 999 960	51 999 960	51 999 960	51 999 960	51 999 960	51 999 960

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական
տեխնոլոգիաների նախարարության
ՀՀ ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02565518
ՀՀ 900011020246

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Բաղրամյանշին» ԲԲԸ
ՀՀ Արմավիրի մարզ, գ.Լեռնագոգ
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 04600132
ՀՀ 115004673956

/ստորագրություն/
Կ.Տ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/5Շ/2

ք.Երևան «04» մայիսի 2018թ.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ս. Ամիրխանյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բաղրամյանշին» ԲԲԸ-ն, ի դեմս տնօրեն Գ.Վարդանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «Արաքսավան» սահմանապահ ուղեկալ տանող կամուրջի հիմնանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն հավելված N 2-ի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 3 տարին: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ

վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 51 999 960 (հիսունմեկ միլիոն ինը հարյուր իննսունինը հազար ինը հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, որից 8 666 660 (ութ միլիոն վեց հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր վաթսուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ

ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները՝ կազմված 6 էջից, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 18-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության ՀՀ ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն ՀՎՀՀ 02565518	«Բաղրամյանշին» ԲԲԸ ՀՀ Արմավիրի մարզ, գ.Լեռնագոգ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ ՀՎՀՀ 04600132 ՀՀ 115004673956
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված թիվ 1
«04» մայիսի 2018թ. կնքված
N ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/5Շ/2 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Արաքսավան» սահմանապահ ուղեկալ տանող կամուրջի հիմնանորոգման աշխատանքների կատարման

№ ը/կ	Աշխատանքների անվանում	Չափի միավորը	Քանակ	Միավորի գինը	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6
1.Նախապատրաստական աշխատանքներ					
1	Մետաղական ցանկապատի քանդում 2.2մ բարձրությամբ	գծմ	25	3037	75937
2	Մետաղական ցանկապատի վերականգնում 2.2մ բարձրությամբ	գծմ	25	4860	121500
3	Ժամանակավոր ճանապարհի կառուցման համար 33Ч-II կ. գրունտի մշակում բուլդոզերով միջինը 15սմ հաստությամբ տեղափոխելով մինչև 50մ դեպի շինարարական հարթակի լիցք	մ³	30	662	19873
4	Ժամանակավոր ճանապարհի հարթեցում բուլդոզերով 33Ч-II կ. գրունտներում	մ²	190	14	2673
5	Ժամանակավոր ճանապարհի կառուցման համար խճաավազային ծածկույթի իրականացում h=10սմ հաստությամբ և տոփանում	մ²	190	607	115314
6	D=1420*10մմ տրամագծով պողպատյա ջրատար խողովակների տեղադրում	գծմ	99	18046	1786554
8	D=1420*10մմ տրամագծով պողպատյա ջրատար խողովակների ապամոնտաժում	գծմ	99	4251	420879
9	Հողային պատնեշի պրոֆիլի ձևավորում բուլդոզերով յուղային կավից գետի հունում 2.1մ բարձրությամբ	մ³	360	2769	996852
10	Հողային պատնեշի պրոֆիլի ձևավորում յուղային կավից ձեռքով	մ³	24	8037	192885
11	Գրունտների խտացում պնևմոգլդոններով 3 անցումով	մ³	400	281	112465
12	Պողպատյա խողովակների վրա հարթակ պատրաստելու համար խճաավազային ծածկույթի իրականացում h=25սմ հաստությամբ հարթեցումով և տոփանումով	մ²	700	1066	746117
13	Էքսկավատորի աշխատանքային տեղամասում հարթակ պատրաստելու համար խճաավազային ծածկույթի իրականացում h=20 սմ հաստությամբ , հարթեցումով և տոփանումով	մ²	75	1199	89903
14	Շինարարական հարթակի կառուցման համար խճաավազային ծածկույթի իրականացում h=160 սմ հաստությամբ , հարթեցումով և տոփանումով	մ²	212,5	5197	1104273
				Ընդամենը՝1	5785224
2.Ափային հենարաններ N1,N3 և միջանկյալ հենարան					
2.1.Ափային հենարան N1					

15	Թիվ 1 և թիվ 3 հենարանների և ուղղորդիչ հենապատերի հիմքերի խրամուղու փորում 33Ч-II կ. խոնավ գրունտներում 0,25մ³ շերեփի տարողությամբ էքսկավատորով, բարձելով ի/թ վրա	մ³	145	782	113421
16	Գրունտի տեղափոխում ի/թ մինչև 1կմ դեպի հարթակի լիցք	տն	253,75	241	61199
17	Թիվ 1 և թիվ 3 հենարանների և ուղղորդիչ հենապատերի հիմքերի խրամուղու փորում 33Ч-II կ. խոնավ գրունտներում 0,25մ³ շերեփի տարողությամբ էքսկավատորով, կուտակելով խրամուղու եզրին	մ³	25	673	16827
18	Նույնը թաց գրունտներում	մ³	260	673	175004
19	Նույնը ջրհագեցված գրունտներում	մ³	135	673	90867
20	Խրամուղու վերջնամշակում ձեռքով թաց գրունտներում	մ³	17	2566	43630
21	Ջրահեռացում կենտրոնախոռոչ պոմպերով խրամուղիներից	մ³	150	3007	451002
22	Ջրամեկուսացման պաշտպանիչ շերտ մեկ շերտ խիտ ստվարաթղթից	մ²	182	1	270
23	Ափային հենարանների և հենապատերի հետնամասերում հետլիցքի համար խճաքարային ցամակուրդային գրունտների փորում հանքավայրում 1.0մ³ տարողությամբ էքսկավատորով բարձելով ի/թ վրա	մ³	315	782	246398
24	Գրունտի տեղափոխում ի/թ մինչև 2կմ դեպի հետլիցք	տն	630	482	303884
25	Խրամուղիների հետլիցք բուլդոզերով ցամակուրդային գրունտից , տեղափոխելով 10մ.	մ³	315	97	30426
26	Կամուրջի երկու եզրերի անցումային մասերի լիցք հենապատերի վերևի մասերում նիշերի բարձրացման համար խրամուղիների եզրերին կուտակած գրունտից	մ³	80	61	4856
27	Խրամուղիների եզրին կուտակած մնացած գրունտի ցրում և հարթեցում բուլդոզերով տեղափոխելով 33Ч-II կ. գրունտը մինչև 50մ	մ³	277	662	183494
28	Ավելացած գրունտի տեղափոխում 33Ч-II կ. մինչև 50մ դեպի շինարարական հրապարակի կառուցման համար	մ³	80	662	52995
29	Խճից նախապատրաստական շերտի տեղադրում N 1 հենարանի հիմքի տակ h=20սմ հաստությամբ	մ³	3,9	13048	50887
30	Միաձույլ ե/բ հիմքի կառուցում B-20 դասի ծանր հիդրոտեխնիկական բետոնից սուլֆատակայուն ցեմենտով	մ³	29,2	71995	2102253
31	Ամրան 12A500C	տն	0,09	560684	50462
32	Ամրան 8A-I	տն	0,0428	576679	24682

33	Միաձույլ ե/բ իրանի պատրաստում B-25 դասի ծանր հիդրոտեխնիկական բետոնից սուլֆատակայուն ցեմենտով	մ³	25,5	74889	1909668
34	Ամրան 22A500C	տն	0,009	558399	5026
35	Ամրան 14A500C	տն	0,246	558399	137366
36	Ամրան 8A-I	տն	0,0712	576679	41060
37	Միաձույլ ե/բ հենման բարձիկների պատրաստում B-25 դասի ծանր հիդրոտեխնիկական բետոնից սուլֆատակայուն ցեմենտով	մ³	1,7	74889	127311
38	Ամրան 12A500C	տն	0,061	560684	34202
39	Ամրան 8A-I	տն	0,043	576679	24797
40	Ներդիր էլեմենտների տեղադրում /3հատ/	տն	0,0279	690079	19253
41	Հենման բարձիկների վրա ցեմ. ավազային շաղախի տեղադրում թեքության համար h=20--80մմ	մ³	0,2	43626	8725
42	Հենարանի միաձույլ ե/բ կողային պատերի պատրաստում B-25 դասի ծանր հիդրոտեխնիկական բետոնից սուլֆատակայուն ցեմենտով	մ³	0,3	85095	25529
43	Ամրան 12A500C	տն	0,0282	560684	15811
44	Ամրան 8A-I	տն	0,0088	576679	5075
45	Գրունտի հետ շփվող մակերեսների ջրամեկուսացում 2շերտ տաք բիտումով	մ²	98	1164	114025
				Ընդամենը՝2.1	6470404
2.2.Ափային հենարան N3					
46	Խճից նախապատրաստական շերտի տեղադրում N 1 հենարանի հիմքի տակ h=20սմ հաստությամբ	մ³	3,9	13048	50887
47	Միաձույլ ե/բ հիմքի կառուցում B-20 դասի ծանր հիդրոտեխնիկական բետոնից սուլֆատակայուն ցեմենտով	մ³	29,2	71995	2102253
48	Ամրան 12A500C	տն	0,09	560684	50462
49	Ամրան 8A-I	տն	0,0428	576679	24682
50	Միաձույլ ե/բ իրանի պատրաստում B-25 դասի ծանր հիդրոտեխնիկական բետոնից սուլֆատակայուն ցեմենտով	մ³	21	74889	1572667
51	Ամրան 22A500C	տն	0,009	558399	5026
52	Ամրան 14A500C	տն	0,224	558399	125081
53	Ամրան 8A-I	տն	0,0632	576679	36446
54	Միաձույլ ե/բ հենման բարձիկների պատրաստում B-25 դասի ծանր հիդրոտեխնիկական բետոնից սուլֆատակայուն ցեմենտով	մ³	1,7	79417	135008

55`	Ամրան 12A500C	տն	0,061	560684	34202
56	Ամրան 8A-I	տն	0,043	576679	24797
57	Ներդիր էլեմենտների տեղադրում /3հատ/	տն	0,0279	690079	19253
58	Հենման բարձիկների վրա ցեմ. ավազային շաղախի տեղադրում թեքության համար h=20--80մմ	մ³	0,2	43626	8725
59	Հենարանի միաձույլ ե/բ կողային պատերի պատրաստումB-25 դասի ծանր հիդրոտեխնիկական բետոնից սուլֆատակայուն ցեմենտով	մ³	0,3	85095	25529
60	Ամրան 12A500C	տն	0,0282	560684	15811
61	Ամրան 8A-I	տն	0,0088	576679	5075
62	Գրունտի հետ շփվող մակերեսների ջրամեկուսացում 2շերտ տաք բիտումով	մ²	84	1164	97736
				Ընդամենը՝2.2	4333640
2.3.Միջանկյալ հենարան					
63	Միջանկյալ հենարանի հիմքի փորում 33ա-II կ. ջրհագեցված գրունտներում 0,25մ³ շերեփի տարողությամբ էքսկավատորով, կուտակելով խրամուղու եզրին	մ³	35	673	23558
64	Նույնը թաց գրունտներում	մ³	25	673	16827
65	Նույնը խոնավ գրունտներում	մ³	16	673	10769
66	Փոսորակի վերջնամշակում ձեռքով թաց գրունտներում	մ³	10	257	2566
67	Խճից նախապատրաստական շերտի տեղադրում N 1 հենարանի հիմքի տակ h=20սմ հաստությամբ	մ³	3,3	13048	43058
68	Միաձույլ ե/բ հիմքի կառուցում B-20 դասի ծանր հիդրոտեխնիկական բետոնից սուլֆատակայուն ցեմենտով	մ³	17,4	71995	1252712
69	Ամրան A500C	տն	0,163	560684	91391
70	Ամրան A-I	տն	0,023	576679	13264
71	Միաձույլ ե/բ իրանի պատրաստում B-25 դասի ծանր հիդրոտեխնիկական բետոնից սուլֆատակայուն ցեմենտով	մ³	9,2	74889	688978
72	Ամրան A500C	տն	0,235	558399	131224
73	Ամրան 8A-I	տն	0,054	576679	31141
74	Միաձույլ ե/բ կանգնակների պատրաստում B-25 դասի ծանր հիդրոտեխնիկական բետոնից	մ³	0,7	74889	52422
75	Ամրան A500C	տն	0,285	560684	159795
76	Ամրան A-I	տն	0,05	576679	28834
				Ընդամենը՝2.3	2546541
2.4 .Հավաքովի ե/բետոնյա պարզունակ					

77	Բ-1 հավաքովի ե/բետոնյա պարզունակի / 4.7*1.25*0.5մ/ մոնտաժում Բ-25 դասի բետոնից /1հատ/	մ³	2,78	292949	814398
78	Անկյունակ 100*100*10մմ	տն	0,0423	559314	23659
79	Ներդիր էլեմենտների տեղադրում /6հատ/	տն	0,054	690079	37264
80	Պարզունակի վրա ցեմ. ավազային շաղախի տեղադրում թեքության համար h=20--80մմ	մ³	0,15	43626	6544
81	Գրունտի հետ շփվող մակերեսների ջրամեկուսացում 2շերտ տաք բիտումով	մ²	44	1164	51195
82	Ջրամեկուսացման պաշտպանիչ շերտ մեկ շերտ խիտ ստվարաթղթից	մ²	44	1481	65165
83	Գրունտի հետլիցք բուլդոզերով , տեղափոխելով 10մ.	մ³	56	97	5409
				Ընդամենը՝2.4	1003635
				Ընդամենը՝2	14354220
3.Թռիչքային կառուցվածք					
84	Հավաքովի ե/բ 15մ երկարությամբ թռիչքային կառուցվածքի հեծանների մոնտաժում	հատ	6	2583774	15502646
85	Շարժական և անշարժ հենարային մասերի տեղադրում հեծանների տակ	հատ	12	50572	606864
86	Լրացուցիչ ներդիր էլեմենտների տեղադրում /12հատ/	տն	0,1044	690079	72044
87	Միջհեծանների միաձույլ տեղամասերի մոնոլիթացման երկաթբետոնի իրականացում Բ-25 դասի	մ³	2,9	72884	211363
88	Ամրան 8Ա-Ի	տն	0,1421	576679	81946
				Ընդամենը՝3	16474863
4.Տապաստ և անցումային սալերի տեղադրման աշխատանքներ					
89	Խճային շերտի տեղադրում տապաստի տակ տակ h=40սմ հաստությամբ	մ³	7,9	13048	103079
90	Հավաքովի ե/բ տապաստների տեղադրում L-4/2հատ/	մ³	3,4	244491	831270
91	Խճային շերտի տեղադրում անցումային սալերի տակ h=15սմ հաստությամբ	մ³	5,7	13048	74374
92	Հավաքովի ե/բ անցումային սալերի տեղադրում Π1-4 /10հատ/	մ³	9,4	244491	2298218
93	Անցումային սալերի միաձույլ երկաթբետոնի իրականացում Բ-25 դասի բետոնից	մ³	2,0	72965	145929
94	Ամրան 3Ա-Ի	տն	0,0114	795102	9064
95	Գրունտի հետ շփվող մակերեսների ջրամեկուսացում 2շերտ տաք բիտումով /տապաստ և անցումային սալ/	մ²	19	1164	22107
				Ընդամենը՝4	3484042
5.Կամուրջի երթևեկելի մասի ,անցումային սալերի և անվահիրիչ կառուցման աշխատանքներ					
96	Երթևեկելի մասի միաձույլ երկաթբետոնի իրականացում Բ-30 դասի բետոնից հարթեցնող շերտի հետ միասին	մ³	29,0	78557	2278159

97.	Ամրանային ցանց 6Вр -II 100*100մմ բջիջով	տն	0,793	795102	630516
98	Ամրան 12А500С	տն	0,626	560684	350988
99	Ամրան 8А-I	տն	0,216	576679	124563
100	Անվահրիչի միաձույլ երկաթբետոնի իրականացում В-30 դասի բետոնից	մ³	7,4	78557	581323
101	Ամրանային ցանց 6Вр -II 100*100մմ բջիջով	տն	0,105	795102	83486
102	Ամրան 12А500С	տն	1,07	560684	599932
103	Ամրան 8А500С	տն	0,289	560684	162038
104	Ներդիր էլեմենտների տեղադրում /62հատ/	տն	0,15	690079	103512
105	Մետաղական բազրիքների տեղ.	տն	1,76	627665	1104690
106	Մետաղական բազրիքների ներկում հակակոռոզիոն ներկով /նախաներկումով 2անգամ /	տն	1,76	26398	46460
107	Ջերմաանխզելի կոնստրուկցիայով բոլոր թվով 4հատ դեֆորմացիոն կարաանների հիդրոիզոլային շերտերի փռում	մ²	178,00	5474	974437
108	Դեֆորմացիոն կարաաններում 50*100մմ հատվածքի չափերով ծյութապատ տախտակի տեղադրում	մ³	0,068	229848	15630
				Ընդամենը՝5	7055733
6.Հենապատ					
109	Հենապատի հիմքերի կառուցման խրամուղիների փորում 33Կ-II կ. գրունտներում 0,25մ³ շերեփի տարողությամբ էքսկավատորով, կուտակելով խրամուղու եզրին	մ³	80	673	53847
110	Նույնը ջրահագեցված գրունտներում	մ³	30	673	20193
111	Նույնը թաց գրունտներում	մ³	50	673	33655
112	Նույնը խոնավ գրունտներում	մ³	30	673	20193
113	Խրամուղիների վերջնամշակում ձեռքով թաց գրունտներում	մ³	12	2566	30798
114	Ջրահեռացում կենտրոնախոռյս պոմպերով խրամուղիներից	մ³	60	3007	180401
115	Խճից նախապատրաստական շերտի տեղադրում հիմքի տակ h=15սմ հաստությամբ	մ³	10	13048	130480
116	Միաձույլ ե/տոնյա հիմքի կառուցում В-20 դասի ծանր հիդրոտեխնիկական բետոնից սուլֆատակայուն ցեմենտով	մ³	68,8	72438	4983732
117	Միաձույլ ե/բ իրանի պատրաստում В-20 դասի ծանր հիդրոտեխնիկական բետոնից	մ³	40,3	73086	2945381
118	Ամրան А500С	տն	0,589	558399	328897
119	Ամրան 8А-I	տն	0,105	576679	60551
120	Գրունտի հետ շփվող մակերեսների ջրամեկուսացում 2շերտ տաք բիտումով	մ²	240	1164	279246
121	Ջրամեկուսացման պաշտպանիչ շերտ մեկ շերտ խիտ ստվարաթղթից	մ²	240	1481	355444
122	Դեֆորմացիոն կարաաններում 50*100մմ հատվածքի չափերով ծյութապատ տախտակի տեղադրում	մ³	0,3	230763	69229
123	Ափային հենարանների և հենապատերի հետնամասերում հետլիցքի համար խճաքարային ցամակուրդային գրունտների փորում հանքավայրում 1.0մ³ տարողությամբ էքսկավատորով բարձելով հ/թ վրա	մ³	353	782	276122
124	Գրունտի տեղափոխում հ/թ մինչև 2կմ դեպի հետլիցք	տն	706	482	340543
125	Խրամուղիների հետլիցք բուլդոզերով ցամակուրդային գրունտից , տեղափոխելով 10մ.	մ³	353	97	34107

				Ընդամենը՝6	10142818
7.Այլ աշխատանքներ					
126	Փոսորակների փորում ձեռքով 33Ч-II գրունտներում	մ³	12	2139	25665
127	Պարապետի հիմքերի տակ ավազակոպճային հարթեցնող շերտի տեղադրում	մ³	0,8	4254	3403
128	Նոր պարապետների հիմքերի պատրաստում B15 դասի բետոնից	մ³	3,90	211876	826317
129	Բետոնյա պարապետների պատրաստում B-20 դասի բետոնից	մ³	7,8	90813	708340
130	33Ч-II կ. գրունտի մշակում բուլդոզերով տեղափոխելով մինչև 70մ հարթեցնելով տեղում ՝ գետի հունից դուրս	մ³	120	941	112968
131	33Ч-II կ. թաց գրունտի մշակում բուլդոզերով տեղափոխելով մինչև 70մ հարթեցնելով տեղում ՝ գետի հունից դուրս	մ³	430	941	404801
132	33Ч-II կ. ջրահագեցած գրունտի մշակում բուլդոզերով տեղափոխելով մինչև 70մ հարթեցնելով տեղում ՝ գետի հունից դուրս	մ³	350	941	329489
133	Անվահրիչի գլխամասերի ու երթևեկելի մասի կողմից ուղղաձիգ սպիտակ-սև ներկում 2անգամ	մ²	66,5	977	64973
134	Անվահրիչի հետևի մասի պարապետների ներկում սպիտակ ներկով 2անգամ	մ²	66,5	977	64973
135	Ճանապարհի առանցքի և կողերի նշագծում հոծ գծով 10սմ լայնությամբ 1.1	կմ	0,176	105750	18612
				Ընդամենը՝7	2559540
				Ընդհանուրը՝1,2,3,4,5,6 և 7 բաժիններով	**59856440**

*Միավորի արժեքը ներառում է շահույթը և Ա.Ա.Հ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական
տեխնոլոգիաների նախարարության
ՀՀ ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02565518

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Բաղրամյանշին» ԲԲԸ
ՀՀ Արմավիրի մարզ, գ.Լեռնագոգ
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 04600132
ՀՀ 115004673956

«ԲԱՂՐԱՄՅԱՆՇԻՆ»
«БАГРАМЯНШИН»
04600132

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«04» մայիսի 2018թ. կնքված
N ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/5Շ/2 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
«Արաքսավան» սահմանապահ ուղեկալ տանող կամուրջի հիմնանորոգման աշխատանքների կատարման

No	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		սկիզբը	ավարտը
1	Նախապատրաստական աշխատանքներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 10 օր հետո
2	Ափային հենարաններ N1, N3 և միջանկյալ հենարան	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 10 օր հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 75 օր հետո
3	Թռիչքային կառուցվածք	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 75 օր հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 100 օր հետո
4	Տապատ և անցումային սալերի տեղադրման աշխատանքներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 100 օր հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 120 օր հետո
5	Կամուրջի երթևեկելի մասի, անցումային սալերի և անվահիրչ կառուցման աշխատանքներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 120 օր հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 140 օր հետո
6	Հենապատ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 110 օր հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 130 օր հետո
7	Այլ աշխատանքներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 100 օր հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 150 օր հետո
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ		**ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո**	**ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 150 օր հետո**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության
ՀՀ ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02565518

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Բաղրամյանշին» ԲԲԸ
ՀՀ Արմավիրի մարզ, գ.Լեռնագոգ
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 04600132
ՀՀ 115004673956

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« » մայիսի 2018թ. կնքված
N ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/5Շ/2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
3	45231177/308	«Արաքսավան» սահմանապահ ուղեկալ տանող կամուրջի հիմնանորոգման աշխատանքներ													

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական
տեխնոլոգիաների նախարարության
ՀՀ ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02565518

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Բաղրամյանշին» ԲԲԸ
ՀՀ Արմավիրի մարզ, գ.Լեռնագոգ
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 04600132
ՀՀ 115004673956

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« » մայիսի 2018թ. կնքված
N ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/5Շ/2 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆԱՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքի							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » մայիսի 2018թ. կնքված
N ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/5Շ/2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն